



ՀՆԶԱԿ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ինչք զարձնող վերադառնումներ հայ յեղափոխական կուսակցութեան կազմակերպութեան խնդրին:

Վսեկու և անողութեամբ պսակելու համար մեծ ու նանաւոր գործը քաղաքական ու սօցիալական յեղափոխութիւնը թիւրքաց Հայաստանում, յեղափոխական կուսակցութիւնը պէտք է կանխապէս որոշէ ու կանոնաորէ իր գործունէութեան նախադիրքը: Աւենալով որոշ նպատակ, որի համար նա գիտում է յեղափոխական զբաղմունքին գործունէութեան, յեղափոխական կուսակցութիւնը պէտք է կանխապէս որոշէ այդ գործունէութեան բոլոր միջոցներն ու կերպերը: Բայց յեղափոխական գործունէութեան նախադիր հիմքը, նրա էական կողմը յեղափոխական կուսակցութեան կազմակերպութիւնն է: Կուսակցութիւնը պէտք է իմանայ, որ իր մշտն մարտն ընդդէմ է այնպիսի մի մարմնի, որ ունի կանոնաւոր, խիստ կարգապահ կազմակերպութիւն. — թիւրք կառավարութիւնն ու նրա գործը: Այդպիսի կազմակերպութեանը յեղափոխական կուսակցութիւնն անկարող է պահանջ ված գորութեամբ ընդդիմարդի, եթէ նա չէ կազմակերպված խիստ կանոնների, կարգապահութեան ու ընդհանուր համերախութեան հիման վրայ, թէկուզ նա ինի բազմանդամ և ուժեղ թէ՛ բարդապէս և թէ՛ նիթապէս: Այդ կուսակցութեան գոյութիւնն իսկ կախում է զրա կազմակերպութեան որակաւորութիւնից:

Աւենալու համար ստիճանութիւն ու անողութիւն յեղափոխական գործունէութիւնը, ինչպէս և իւրաքանչիւր հասարակական գործունէութիւն, պէտք է լինի սիստէմական (systematique) պէտք է իր միջոցները գործադրէ սիստէմական պէս, սիստէմական պէս պէտք է գիտէ իր գծադրած նպատակին: Յեղափոխական միջոցների սխառմական գործադրութիւնը, բացի նրանից որ այդ երկոյթներով անդադար արտայայտվում է յեղափոխութեան բնաւորութիւնն ու ոգին, նրա ձգտումները, նրա նպատակները, բացի նրանից, որ այդ երկոյթների շնորհով յեղափոխական ոգով է կրթվում և ժողովուրդը, — նա կատարում է ևս մէկ աւելի մեծ գեր, մէկ աւելի անհրաժեշտ ոլորտն, որ գոյն գործունէութեան ամենակական կողմերից մէկն է: Յեղափոխական միջոցների սխա

ռէմական գործադրութիւնը խախտում, թուլացնում և վերջապէս գրկում է կանոնաւոր կազմակերպութիւնից (desorganiser) թշնամու, կառավարութեան, ընդդիմադրութիւնների տ. ճնշումների սիստէմական գործադրութեան ոյժը: Այդ հանգամանքից վախն ու սարսափըն է տիրում կառավարութեանը, որը լիապէս չկորցնելու համար իր կազմակերպութեան կանոնաւորութիւնն ու սիստէմական ուժը թիւնը, որ ամեն տեսակէտից վտանգաւոր է իրեն, պարտաւորված սկսում է զիջումներ անել, տեղ տալ յեղափոխական կուսակցութեան գէթ minimum պահանջներին: Այդ գիջումներն ապացոյց են յայտնվում, որ կառավարութիւնն իր ոյժը խախտված է զղում: Բայց գիջումների ուղին շատ սահուն է: Յեղափոխականները զարձեւալ շարունակում են իրենց միջոցների սխառմական գործադրութիւնը և կարճ ժամանակի ընթացքում քայքայման հասցնում կառավարութեան ոյժերը: Բայց օրհասական է: Արպէս վիրաւոր գազան, կառավարութիւնն իր կատաղութեան շտիր շգիտէ. նա գործ է դնում իր ամենամեծ ոյժերը: Ահա այդ րօպէին յեղափոխական կուսակցութիւնը պէտք է ժողովէ իր ամբողջ գորութիւնը. ահա այդ րօպէին յեղափոխականների սխառմական պրօպագանդով ու ագիտացիայով և նրանց համարձակութեան, սխառմական տէնօրական օրինակներով տարիների ընթացքում անված ու քաջաւերված, կառավարութեան դէմ երկրի ամեն անկիւններում ստի է կանգնում և ժողովուրդը: Այդ րօպէին ապստամբութիւնը ստանում է ամենատար կերպարանք: Կրկին այդպիսի գրութիւն երկրի ներքը և անկարող գրանց կարգի դնել, կառավարութեան զլխին այդ սպտամբութեան շնորհով բարգվում են և նրա արտաքին քաղաքականութեան անաջող հանգամանքները, երկանն են կրում նրա հաշիւներն օտար տէրութիւնների հետ և այդպիսով վերջնականապէս հարուածում կառավարութեանը... Գորդան հանդոյցը կորված է...

Իրերի այդպիսի վիճակ ստեղծում է, ուրեմն, յեղափոխական միջոցների սիստէմական գործադրութիւնը... Բայց կարելի է արդեօք այդ միջոցները սիստէմատար գործադրել, եթէ յեղափոխական ոյժերը համախմբված չեն. դա կարելի է արդեօք, եթէ այդ ոյժերը խիստ կերպով կանոնաւորված չեն, եթէ նրանք ենթադրված չեն խիստ կարգապահութեան. դա կարելի է արդեօք, եթէ այդ ոյժերը չունեն համերախ ու մի որոշ նախադիր վրայ հիմնված յեղափոխական գործողութիւն

ներ. դա, վերջապէս, կարելի է արդեօք, եթէ յեղափոխական համախմբված ոյժերը չունեն մէկ ընդհանուր խիստ կարգապահ, կանոնաւոր ու համերաշխ կազմակերպութիւն: Բնականաբար, ոչ էլ քաղաքացիները:

Ենթադրենք, որ յեղափոխական կուսակցութիւնը, լինելով հանդերձ բազմամեզամ և ուժեղ բարոյապէս ու նիւթապէս, բայց այդ բոլոր ոյժերը մաս մաս են, առանձին-առանձին շրջանների են բաժանված, որով և իւրաքանչիւր շրջանը գործում է իր սեփական նախազօծի տրամադրութեամբ, թէև նրանք ամենքը կապված են իրար հետ բարոյական կապով և դիմում են մի և նոյն նպատակին: Այդպիսի պայմաններն առանձին-առանձին անհատների գործողութիւնների համար ներկայացնելով հանդերձ մի քանի առաւելութիւններ ու յարմարութիւններ, այգուամենայնիւ զուրկ են յեղափոխական աջող գործունէութեան էական պայմանների մէկից, այն է՝ յեղափոխական գործողութիւնների միակերպութիւնից, մի ա տ ի պ ու թ իւ ն ից, և միջոցների այն սխառտման գործադրութիւնից, որ գործողութիւնների համատարութեան անմիջական արդիւնքն է: Շրջանների անհատութեան նորոգով յեղափոխական գործունէութիւնը ստանում է հետևեալ կերպարանքը:

Իսկապէս գործին նուիրված անձեր, որոնք անգամ են այս կամ այն յեղափոխական շրջանին, անձեր, օժտված էներգիայով ու քաղաքացիական ատաքինութեամբ, սկզբում են յեղափոխական գործունէութիւնը հայրենիքում: Թէպէտև նրանց ամենքի նպատակը մի և նոյնն է, բայց նրանց յեղափոխական գործողութիւնների եղանակը և միջև անգամ միջոցները տարբեր են միմեանցից, հետևաբար և համատարութիւնից, քանի որ նրանցից իւրաքանչիւրը գործում է իր առանձին շրջանի նախազօծի տրամադրութեամբ: Այդպիսով փոխարէն միշտ լինելու իրար օգնող, ստեպ նրանք սրարտաւորված են ակամայ և հակառակ իրենց կամքին, քանի որ ամենքը ծառայում են մի և նոյն նպատակին, իրար գործողութիւնների խանգարանք լինել: Իրար միասեղ մինչև իսկ Գրանց հետևանքները պարզ են. նոյն իսկ յեղափոխական կուսակցութեան գանազան շրջանների մէջ կծագեն անհամաձայնութիւններ, հակառակութիւններ և զուցէ աւելի անսխառտ ու շքանկայած ձախորդութիւններ: Այդ հանգամանքները հարուածներ կայանում են յեղափոխական կուսակցութեան համար, ուրեմն և աննպատակ են ընդհանուր գործի համար: Բացի այդ կողմից, յեղափոխական գործունէութեան համար կայ և մէկ ուրիշ ոչ պակաս էական անյարմարութիւններ ներկայացնող կողմ, որ առաջացնում է առանձին շրջանների իրարից տարբեր նախազօծված բաժան-բաժան գործող եղանակը: Կի կողմից՝ առանձին շրջանների միմեանցից նիւթապէս, — մարդկրով ու դրամով, — անջատ լինելը շատ զգալի կերպով թուլանցնում է ամբողջ կուսակցութեան նիւթական զօրութիւնը: Գրանց, հետևաբար, թոյլ կհանդիսանայ և այս կամ այն շրջանի ընդդիմադրութիւնը, երբ նա ենթակայ է կառավարութեան հալածումներին. իսկ սրա հետևանքն այն

կլինի, որ կառավարութիւնն առաւել աջողութեամբ կը կատարէ յեղափոխականների ձերբակալութիւնները: Կի կողմից՝ շրջանների անհատութիւնն ու նրանց նախազօծի տարբերութիւնները կուսակցութեան գործունէութեանը զրկելով ուղուց, եղանակի, միջոցների համատարութիւնից, միաջործութիւնից, կառավարութեան դէմ մղած պատերազմը զգալի կերպով կորցնում է իր ոյժը, որը մաս մաս է բաժանված: Էլ իւրաքանչիւր շրջանի իրեն յատուկ եղանակով հարուածելով թշնամուն, շնորհով իր սակաւ ոյժին՝ բառականապէս չէ աջողում իր դիտաւորութիւնը, այլ և ստեպ բոլորովին չէ աջողում, քանի որ իր հանդէպ ունի կառավարութեան այսպիսի մի կանոնաւոր ոյժը, որ սակաւազօր խմբին թէ կարող է ընդդիմադրել աջող կերպով, և թէ յարձակվել նրա վրայ: Այդպիսի հանգամանքների, մանաւանդ երբ դրանք կրկնվում են, հետևանքները պարզ են. — դրանք կնպաստեն յեղափոխական կուսակցութեան քայքայման:

Գրանք են կազմում յեղափոխական կուսակցութեան մէկ ընդհանուր կազմակերպութեան նշանակութիւնը, և ուրիշ ժողովուրդների յեղափոխական շարժումները չօգտիւնի կերպով ապացուցանում են այդ:

Կեր բոլոր ասածներից պէտք է եզրակացնել, որ յեղափոխական կուսակցութիւնը, ունենալով նոյն որոշ նպատակները, ընդունած գործունէութեան որոշ միջոցներ, պէտք է կազմէ մի մարմին, իր յեղափոխական գործողութիւններում համատար, համերաշխ, կանոնաւոր ու կարգապահ: Այդ մարմինը պէտք է լինի կուսակցութեան մէկ ընդհանուր կազմակերպութիւնը:

Ինչպէս պէտք է լինի այդ կազմակերպութեան նախազօծը:

Աչքի առջև ունենալով այն պայմանը, որ յեղափոխական կուսակցութեան գործունէութիւնը հակակառավար շահան է և այդ հիման վրայ, կարելիին չափ խուսափելու համար կառավարութեան հալածումներից, սրարտաւորված է լինել գաղտնի, ուրեմն և այդ կուսակցութեան կազմակերպութիւնը վիճակված է նոյն ուղին ընտրելու, լինելու գաղտնի:

Գործունէութեան ասպարէզը լինելով թիւրքաց Հայաստանը, բնականաբար, և կազմակերպութիւնն էլ պիտի այնտեղ հաստատվէ: Յեղափոխական շրջաններ պէտք է կազմվեն երկրի որքան կարելի է շատ կէտերի վրայ, այսպէս ասած, պէտք է երկիրը ծածկեն իրենց ցանցով: Այդ բոլոր շրջանները պատկանելով յեղափոխական կուսակցութեան, պէտք է իրար հետ սերտ կապակցութիւն ունենան ոչ միայն բարոյապէս, որ գլխաւորաբար ստեղծում է նրանց բոլորի նպատակի նայնութիւնը, այլ և նիւթապէս:

Էլ անհա այն պայմանները, որ շրջանների մէջ ամրացնելով բարոյական կապը, անհրաժեշտ են ևս նրանց մէջ նիւթական կապ ստեղծելու համար և յայտնվում են նրանց գործողութիւնների համատարութեան, կանոնաւորութեան, կարգապահութեան ու համերաշխութեան միակ ու

անհրաժեշտ հիմքը

Բոլոր շրջանների, որ կազմում են մի կուսակցութիւն, գործունէութեան նախագիծը և կանոնադրութիւնը պէտք է լինի մէկ ընդհանուր, բացի այն յատուկ կէտերից, որ իւրաքանչիւր շրջանն իր առկա անհատական գործունէութեան համար անհրաժեշտ է համարում, կէտեր, հետևապէս, որոնց ստեղծում են սեղանական պայմանների առանձնայատկութիւնները:

Կուսակցութեան այնպիսի յեղափոխական գործողութիւններ, որոնք պահանջում են մեծ զգուշութիւն ու տակտ (tact), որոնք նշանաւոր են և որոնց հետևանքները ծանրակշիւ են, պէտք է կատարվեն կուսակցութեան բոլոր շրջանների միահամուռ միջամտութեամբ: Յիշակ, այդպիսի գործողութիւններ են՝ 1) գործունէութեան ընթացքում կուսակցութեան գործունէութեան նախագծի ու կանոնադրութեան կէտերի քննութիւնը, եթէ հարկը պահանջէ, 2) տևորական մի միջոցի գործադրելու վճիռը, 3) տեղական կամ երկրի շատ կէտերի վրայ ժողովրդային յուզում բարձրացնելու վճիռը, 4) ընդհանուր յեղափոխական յետադայ գործունէութեան կերպի, եղանակի ու սկզբի մասին խորհրդակցութիւնը և այլն: Այդ գործողութիւնների խորհրդակցութիւններում կուսակցութեան բոլոր շրջանների միահամուռ միջամտութիւնը պէտք է կատարվէ հետևեալ կերպով. — Իւրաքանչիւր յեղափոխական շրջանն ընտրում է իր միջոցի մի մի երեսփոխան, յանձնարարելով նրան խորհրդակցութեան խնդիրների վերաբերութեամբ իր, այսինքն շրջանի, առաջարկութեան ու որոշման ձայնը, եթէ խնդիրները շրջանին յայտնի են, իսկ եթէ դրանք յայտնի չեն, հաւատ ընծայելով իր երեսփոխանի որոշման: Առանձին շրջաններից ընտրված երեսփոխանները կզուստարկեն մի յայտնի տեղ, ուր և ամեն մի խնդիր պէտք է վճռվէ երեսփոխանների ձայնաուձեռնութեամբ: Եթէ յարմարութիւնը պահանջէ, փոխանակ յատկապէս իւրաքանչիւր նստին իրենց երեսփոխաններին զրկելով՝ շրջանները կարող են իրենց երեսփոխաններից կազմել ժամանակաւոր, առանց կանխապէս որոշելու այդ ժամանակը, 3 երեսփոխան և 4 արջակաւոր ժողով՝ երկրի կենտրոնում հաստատված, տարով ներան վերոյիշած խնդիրների որոշելու իրաւունքը:

Կուսակցութեան գործունէութեան եղանակները երեք են՝ պրօպագանդա, ագիտացիա և տևորիզմ կամ տեւոր իւրաքանչիւր անդամ իր ընդունակութիւնների ու պատրաստակամութեան համեմատ, յանձն է առնում այդ երեք պաշտօններից (fonction) մէկը: Պրօպագանդա և ագիտացիա պէտք է կատարվեն միաժամանակ եթէ ժողովրդի և թէ՛ աւելի կրթված դասերի շարքերում: Արիւ կերպ պիտի կարգադրել երրորդ, աէնորական, պաշտօնին նուիրված ոյժերը:

Տէնօրական պաշտօնին նուիրված ոյժերը պէտք է իրենցից կազմեն մի մասնաւոր Պատերազմական կազմակերպութիւն, որը Յեղափոխական Վարչական Ժողովի որոշման համեմատ կատարում է տէնօրական գործողութիւնները: Տէնօրական մի գործ կատա-

րում է Պատերազմական կազմակերպութեան այն անդամը, որին ընկնում է վիճակը (վիճակ գցելով):

Կուսակցութեան շրջանների յարաբերութիւնները կատարվում են նրանց անդամների միջոցով. լոկայալ տօնը կատարելու համար կարելի է յատկապէս ունենալ առանձին հաւատարիմ անձեր:

Այժմ դառնանք գրամական կողմին

Կուսակցութեան իւրաքանչիւր շրջանը պէտք է ունենայ իր մասնաւոր գանձարանը, ըստ որում նրա մէջ պարունակվող գումարի մի յայտնի մասը շրջանն առանձնապէս յատկացնում է իր տեղական, սեփական գործունէութեան համար, իսկ մնացած մասը յատկացնում է կուսակցութեան ընդհանուր գանձարանը: Յարմարութեան համար (որ երբեմն մեծ նշանակութիւն ունի) կուսակցութեան ընդհանուր գանձարանը կարող է և շունենալ իրեն յատուկ մի տեղ, այլ իւրաքանչիւր շրջանն իր մօտ կունենաւ ևս մի երկրորդ արկղ, յատկապէս ընդհանուր գանձարանին պատկանելի գումարին:

Եթէ կուսակցութեան անդամների մէջ ծագում են անձնական վէճեր յեղափոխական գործի վերաբերութեամբ, այդ վէճերը քննելու ու վճռելու իրաւունքը պատկանում է երրորդական գատիւն:

Այսպէս ըստական է պարզելու համար մեր միտքը և որոշելու համար յեղափոխական կուսակցութեան կազմակերպութեան սկզբունքները, ձեն ու կերպը կան ևս այլ կէտեր, որոնք կոչված են աւելի լրացնելու այդ նիւթը, սակայն մասամբ նրանց տեղն այստեղ չէ, այլ կուսակցութեան մանրամասն ծրագրի էջերում, մասամբ, և որ զլլատորն է, նրանք տպագրվել չեն կարող: Այդ պատճառով այս անգամ մենք աւարտում ենք մեր խօսքը կազմակերպութեան մասին և հարկաւոր ենք համարում դրան կից գրել մի քանի տող հետևեալ նիւթի վրայ, որի կարևորութիւնը մասնաւորապէս կազմակերպութեան և ընդհանրապէս յեղափոխական գործի տեսակէտից թէ՛ ներկայի և թէ՛ ապագայի վերաբերութեամբ հերքել անկարելի է:

Եթէ Եւրոպայի զանազան երկիրներում, Ռուսաստանը թիւրքիան ու Հայաստանը դրանց կցորդելով հայերի մէջ գոյութիւն ունեն այժմ յեղափոխական գաղտնի շրջաններ, որոնց պարագմունքն իրենց նպատակի վերաբերութեամբ այսօր կազմում են տակաւին պատերազմական աշխատութիւններ, շատ օգտաւէտ ու ցանկալի կլինէր, որ այդ շրջանները հէնց հիմակուալ նից որ և է կերպով ու ճանրայով միմեանց գոյութեան մասին տեղեկութիւն տանէին և ոյնուհետև միջամտէին միմեանց, սկսէին իրար հետ ունենալ յայտնի յարաբերութիւններ, ստեղծէին յայտնի կապ իրար մէջ: Իրենց նպատակի նշանութիւնը պիտի է յայտնվէ առաջնորդ այդ քաղաքական անկախ իրանք պէտք չանան իրենց համար յեղափոխական գործունէութեան մէկ ընդհանուր կանոնադրութիւն կազմել ու զարգացնել և կամ համաձայնութիւն

կայացնել մէկ արդէն գոյութիւն ունեցող այդպիսի կանոնադրութեան վրայ, և այդպիսով կապել իրար բացի նպատակի և՛ իրենց կանոնադրութեան նոյնութեամբ:

Այդուհետեւ այդ առանձին շրջանները, եթէ նրանք գեռ չեն սկսած ուղղակի մասնակցել գործին ուր հարկն է, այսինքն՝ թիւրքաց Հայաստանում, պէտք է աշխատեն միմեանց օգնելով և իրենց ընդհանուր խորհրդակնոթեամբ կազմել մէկ ուրիշ ծրագիր՝ իրենց պատրաստակաւ աշխատութիւնն և ընդհանուր ծրագիրը:

Ասեմք դրա մասին երկու խօսք:

Այդ շրջանների, մինչև իրենց բուն ստարեզ դնալը, պատրաստական աշխատութիւնների նպատակն է՝ շտապնել ու գարգացնել իրենց ոյժերը մարդերով ու գրամս պէս:

Այդ նպատակի համար նրանց գլխաւոր միջոցներն են՝ պրօպագանդա ու աշխատացիա:

Այդ շրջանները պէտք է հայ հասարակութեանը, — իրրեզլիսաւոր տարրի՝ ընդունակ գիտակցական յեղափոխականներ առաջացնելու, — ապացուցանեն յեղափոխութիւն անելու անհրաժեշտութիւնը թիւրքաց Հայաստանում և վատասկեն նրա, հասարակութեան, համակրութիւնն ու աջակցութիւնն այդ գործի վերաբերութեամբ:

Այդ շրջանները պէտք է թիւրքահայ բանուր պանդխտների կարգերում պրօպագանդա անեն, նրանց համոզելով հայրենիքում յեղափոխութիւն անելու անհրաժեշտութիւնը և քարոզեն նրանց վերադառնալ հայրիքի՝ ապրտաւթիւն բարձրացնելու գիտաւորութեամբ: Նիթապէս օգնել հայրենիք վերադառնալու այն բանուր պանդխտներին, որոնք սպասամբական գիտումներով են մեկնում դէպ իրենց երկիրը: Կազմել այդ բանուրներից, ապաստամբական ոգւով առաւել պատրաստվածներից, յեղափոխական կազմակերպութիւններ:

Բացի այդ բոլորից, այն շրջանները պէտք է իրենց բարոյական, մտաւոր ու ֆիզիքական ինքնապատրաստութեամբ զբաղվեն:

Կանապէս այդ շրջանները պէտք է այժմանից հիմնեն գանձարան յեղափոխական գործի համար, հետեւեալ նպատակով. — շրջանների միահամուռ խորհրդածութեամբ ու միջամտութեամբ գրամսպէս օգնել իրենց կուսակցութեան այն անդամներին կամ շրջաններին, որոնք արդէն գործում են բուն ստարեզի վրայ: Այդ գանձարանը կարող է շունենալ մի որոշ տեղ, այլ իւրաքանչիւր շրջանն առանձնապէս իր գումարած գրամը կարող է պահել իր մօտ գտնված գրա համար մասնաւորապէս յատկացրած գանձարանում: Շրջանների գանձարանների գրութեան մասին կարող են տեղեկութիւն ունենալ այդ բոլոր շրջանները: (Այդպիսի գանձարաններ կարող են հիմնվել հայ հասարակութեան և այն շրջաններում, որոնք միայն ձգտում ունեն կողմնակի կերպով նպաստել հայ յեղափոխական շարժման):

Այսպէս, դեռ բուն ստարեզի վրայ գործելուց առաջ այդ շրջաններն իրար հետ կապվելով, կստեղծեն մէկ ընդ-

հանուր կազմակերպութիւն, որն արդէն կրեւկայանայ իրրե յայտնի ոյժ, և անպատրաստ ու տկար կերպով չեն սկսիլ իրենց գործը, երբ անցած կլինեն գործի բուն ստարեզը՝ թիւրքաց Հայաստանը:

Յեղափոխական պատրաստական աշխատութիւններով զբաղվող շրջանների առանձին ուշադրութիւնն ենք դարձնում այն կէտի վրայ, որ իրենց այդ քայլերն անեն յայտնի զգուշութեամբ (բայց ո՛չ երկոտութեամբ), խուսափելու համար այն անախորժ, երբեմն և վատազարտ առաջարկներից, որ իրենց ճանրային հաշիւակելով թուլամորթ անձերի, սրանց հետ իրենց ունեցած այդ զաղտնի յարաբերութիւնները կարող կլինեն առաջացնել: Յեղափոխական գործունէութիւնը շատ փափուկ գործունէութիւն է. մէկ անզգոյշ քայլ, մինչև իսկ մէկ անզգոյշ խօսք կարող է պատճառ յայտնվել անհաճոյ հետեւանքների: Անկեղծամար նուիրված յեղափոխական գործին, յատկապրած նրան իր բոլոր մտաւոր, բարոյական ու ֆիզիքական ոյժերը. սեփական համոզումով ընտրած այդ գործունէութիւնը, իրրե իր կենսի նպատակ, իրրե իր անհատական ձգտումների էութիւն. անկեղծ յարաբերութիւններ ունենալ իր գործակից ընկերների հետ. ամեն պարագաներում հոգալ բացառապէս գործի շահերի համար, — ահա այն յատկութիւնները, որոնցով միշտ, ամեն տեղ, ամեն հանգամանքին պէտք է առաջնորդվել յեղափոխականը: Գծքազգաբար, հայերի մէջ զարգացած է հայրենասիրական պոտտախօսութեան ախտը, հայրենասիրական չարտանիզը: Կան անձեր, այդպիսի պոտտախօսներ, որոնք մէկ երկու հայրենասիրական ճոճոտան ֆրազներ սերտած, թութակի նման թէ հրապարակապէս և թէ աւելի անձուկ շրջաններում ամեն պատեհ ու անպատեհ առիթին պատրաստ են հայրենասիրական «թող փչել» իրենց անկեղծիքների աչքին: Եւ պակաս չեն, աւանդ, այն պիտի անհետատես, թեթեւօտիկ կամ հէնց պարզապէս սղէտ մարդիկ, որոնք այդ «հայրենասէր» թութակներին երկինք են բարձրացնում, և դրանից առաջանում է այս վերջինների ինքնահաւանութեան ախտը: Մեր համախոհներին հետեւալ խորհուրդն ենք տալիս այդ երկու կարգ կրոնիկիքան արցունքներ թափող «հայրենասէրների» վերաբերութեամբ. — խղճացէ՛ք նրանց, ընկերներ. նրանք ողորմելի են: Մի մարտնչէ՛ք նրանց դէմ, եթէ նրանց հայրենասիրական խօսքերի խաղերը կամ անմեղ զուարճութիւնները գործին մնաս չեն բերում: Երկխան պիտի որ և է բանով զբաղվէ, որ լաց չլինէ: Մեր «հայրենասէր» փոփոխամիտ պոտտախօսները շատ փափուկ գործ են իրենց խաղալիք ընտրում, բայց եթէ իրապէս այդ գործը նրանց խաղերից մնաս չի ստանալ, թողէ՛ք նրանց հանգիստ: Ամեն մեծ գործ, հէնց իսկապէս նրա համար որ նա մեծ է, ունի, գծքազգաբար, իր սլանդակ կողմերը, ունի իր կապիկները. ոսկէ արտն իսկ զուրկ է չոր ու անպիտան խտրից: Ինչո՞ւ վատնել ձեր թանկուզին ոյժերը խղճուկ մրջիւններին հարուածելու համար. — խղճացէ՛ք նրանց, ընկերներ: Այո՛, խղճացէ՛ք, բայց և զգուշացէ՛ք նրանցից. սլոտտախօսներն անկեղծութիւնից

զորի ու փոփոխամիտ մարդիկ են և սակաւ բացառութեամբ՝ ազէտ, և իբրև այդպիսիներ՝ նրանց հաւատ ընծայել չէ կարելի . . .

Առանց երկար ու բարակ մեկնարանութեան ու առարկութեան ի նպատակ մեր յայտնած մտքերի և առաջարկութիւնների, մենք կարճ կերպով ուղղակի դիմում ենք այն հայերին և, զլիաւորապէս, այն հայ երիտասարդութեան, որ ոչ միայն անտարբեր չէ, այլ և իր սրտին մօտ է համարում հայ ժողովրդային ընդհանրութեան բարեկալութեան գործը, և հրաւիրում ենք նրանց աւանձին ուշադրութիւնը մեր այս յօդուածի և առաջարկութիւնների վրայ, որոնց ձայնը, լիայցա ենք, չի լինիլ և չի պիտի լինի «ձայն բարբառոյ յանապատի»:

**Փ Ո Ւ Ր Ա Ս Ի Ա Յ Ո Ւ Մ
ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՇԵՐ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ
ԼՈՒՐԵՐԻ ԱՌԻԹՈՎ**

Մեր օրինական, գլխաւորապէս՝ թիւրքահայ, մամուլը վերջին ժամանակներս բաւական տեղեկութիւններ տվեց Փորք-Ասիայում երկաթուղու գծեր անցկացնելու մասին, որ իբր յանձն է առել գերմանական մէկ ընկերութիւն, չահաւեր Անդրիայի կրթերը զբոսնելու Նոյն մամուլը նմանապէս խօսեց այդ նախագծի առթով և նա խօսեց, չախտակալ թագոյնը իր վարդազոյն երազները, իր որակաւորութիւնը և չղացաւ զովեաններ ուղղել թիւրք կառավարութեան, որ այնքան հոգս է տանում Փորք-Ասիայի, ուրեմն և Հայաստանի, բնակիչների պէտքերի համար: Հայերի առաջադիմութեան, քաղաքակրթութեան, աւետարանութեան ու վաճառականութեան բարեկալութեանը, հայ ժողովրդի և երկրի հարստանալու մասին խօսքեր ու գրատորութիւններ թութում էին այստեղ, այնտեղ այդ յօդուածները բառերի խոտնիճաղանձ ձևերի մէջ: Սակայն այդպիսի որակաւորութեամբ գրուած, ոչ որ ծանրութիւն չկրեց փորք-ինչ առաւել լայն հայեացք զըցել այդ հարցի վրայ և ցոյց տալ նրա իսկական միտքն ու նշանակութիւնը հայ ժողովրդի բարեկեցութեան վերաբերութեամբ, աչքի առջև ունենալով նրա հասարակական կացութեան ներկայ պայմանները: Ճիշդ է, որ դրանից մեր պարզասիրտ հայրենակիցների որակաւորութիւնն իր ջախից բաւական կիրօցելը, բայց դրանից մեր հասկացողութիւնն այդ հարցի մասին աւելի շատ ու աւելի ճշաւ կլինէր:

Խօսենք այդ նիւթի մասին զլիաւորապէս մեր, հայ ժողովրդի շահերն ունենալով աչքի առջև:

Նախ և առաջ ծագում է հետեւեալ հարցը՝ ինչ նպատակով է ուղում բարեկեց գարձնել Փորք-Ասիայի բնակիչներին ոչ թէ թիւրք կարավարութիւնը և ոչ էլ փորք-ասիացիների կամ բարեկիրտ հայ հայրենասէրների մէկ ընկերութիւն, այլ օտարը, գերմանացին, որն իսկապէս

ոչինչ գործ չունէ ոչ Փորք-Ասիայի բնակիչների ընդհանրապէս և մասնաւորապէս հայ ժողովրդի և նրանց բարեկեցութեան հետ:

Եւ պարզ է, որ փորք-ասիացիների շահերը չեն զերմանացուն գրգել այդ քայլն անելու, այլ երրորդական տէրութիւնները, միմեանց առաջը կարելով, ձգտում են օգտվել Փորք-Ասիայի «հում նիւթ» ազգութիւններով, նրանց էքսպլուատացիա (exploitation) անել:

Մեզ կարող են պատասխանել թէ՛ թնդ այդպէս լինի բայց դրան կից մեր մէջ կաճէ կուլտուրան (culture), կըստ գտնայ աւետարանութիւնը, կհարստանայ երկիրը, և վերջապէս, չէ՞ որ մեծ մասամբ օգուտը մերը կլինի: Այս աւարկութեան հետ գուցէ համաձայնելնք, բայց . . . Չտապենք գրչի մի նկարով միանգամից վճակ այդ հարցը. նայենք աւելի խորը և աչք ածենք ուրիշ ազգերի դոյնանման հանգամանքների վրայ:

Ընդհանրապէս առաջադիմութեան երեւոյթներն ինքն ըստ ինքեան բարիքներ են և շատ պարագաներում չէին յայտնվիլ իբրև աղէտներ մարդկութեան մեծամասնութեան համար, եթէ մարդկութեան քաղաքական ու աշխատանքի տնտեսական կազմակերպութիւնն այնպիսի պայմանների վրայ հիմնված լինէր, որոնք միջոց տային առաջադիմութեան շատ բարիքներին, փոխանակ չարիք դառնալու, նպատակայարմար կերպով ծառայել մարդկային ըստուար հանրութեան:

Փորք-Ասիայում երկաթուղու գծեր անցկացնելու մաստըն ինքն ըստ ինքեան, անտարակոյս, յայտնվում է առաջադիմութեան մի նշանաւոր ֆակտոր (facteur): Բայց թիւրքաց Հայաստանի այժմեան քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանրագին պայմանների ներկայութեամբ՝ ո՞ւմ արդեօր կծառայէ առաջադիմութեան այդ ֆակտորը, ո՞վ կօգտվէ և ո՞վ կկորցնէ (յայտնի է, որ առաջադիմութիւնն առանց զոհաբերութեան չի լինում), և սրապէս նա կազդէ մեր ժողովրդի մօտիկ ապագայի վրայ:

Ահա հենց այդ հարցերի մասին մենք կուզէինք անել մի քանի դիտողութիւններ կարելիին շափ կարճ կերպով և որքան մեղ ներում է դոյն հարցին զերամատչելի եղաւ, նակ ու ձև տարու մեր ցանկութիւնը:

Նախ և առաջ ինչ է իրենից ներկայացնում ժամանակակից առաջադիմութիւնը, քաղաքակրթութիւնն ու երկրի հարստութիւնը ժողովրդային շահերի տեսակէտից: Դստիայն մի գծուարին, ժողովրդային աշխատող հանրութիւնների արիւնով ու քրտինքով չաղաղված ճանապարհ է գէպի մարդկութեան ազազայ բարեկեցութիւնը: Դստիական ճանապարհն է գէպի Գանաթի գծուրը, որտեղ ինչքան առաջ են գնում, այնքան առատ են հանդիպում աւելի ծանր շարչարանքների, աղէտների, թշուառութիւնների, լոկ այն տարբերութեամբ, որ ներկայ առաջադիմութեան մարտիրոսները կրում են իրենց մէջ յուսոյ կայծ ապագայի վերաբերութեամբ: Դստի մի ծանր փորձառութիւն է մարդկութեան գէպ առաջադիմութիւն ունեցած ընդունակութեանն ու առկուռութեանը, փորձառութիւն, որի բովից, հաւանական է, բոլոր ազգութիւնի

ըը կենդանի չեն անցնիր և շատերը նրանցից կեննն պատմական բնույթ և կրթական առելի զորանքների հետ:

Այս գեղեցիկ եւրոպական տառաջողէմ երկիրներից որ մէկի վրայ որ կուզէք: Վիտտիթեան ու տեխնիկայի առաջագիմնութիւնն այն երկիրները կուրսորական զարգացման այնպիսի բարձր աստիճանի է հասցրել որի մասին մտածել անվամ չէին կարող սրանից եօթնասունն տարի մի դար անաջ: Այդ մասնակիները հարկան, երկու թուղու մասին երազում էլ չէին մինչդեռ այժմ չկայ որ և է նշանաւոր քաղաք որ շրջապատված շէնի երկաթուղու բազմաբանակ զծերով, ջրային ճանապարհներով, հեռագրական թելերով, սրտք, սարգոտայի նման, խառնդէս վարազուրում են ամբողջ միջին Եւրոպան ու Անգլիան: Այնտեղ քաղաքներն ու բնակավայրերը չենբը մեծակառայ զործարանների բազմութիւ միտող ծխնեղայնութիւ ներկայացնում են կախարչական բնակավայրերի տեսարան: Այնտեղ հնչողական զործարաններում, օդու թեւամբ ամենայն տեսակ մեքենաների, որոնք առկողի շարժման են ենթարկվում շողիչ ջրի ու կէքարականութեան միջոցով, բանում են բանտերների խառն լեզնաներ, որոնցից ամեն մի բանն որ մեքենաների շարժով զործում է ամենապահանջ 10 անգամ առելի մեր հնարալ նախապետական զործարանով բանողից, դեռ հնարված նրա արդիւնագործութեան յատկութեան մեծ զանազանութիւնը մեր բանողի արդիւնագործութեան որպիսութիւնից: Այնտեղ չկայ և մի կտոր հող որ ամենամեծաբնակչութիւ պէրպիւ մտկիւմ շէնի ամեն տեսակ մեքենաների և գիտութեան ու տեխնիկայի ու խորհում արտոմ ամենավերջին գիտելի օգիտութեամբ, և նրա արդիւնքն, ուրեմն, շէնի ամենապահանջ 3-4 անգամ առելի մեր երկրի ամենատառողջ հողի արդիւնքից, որի համար զործադրում են հնարալ նախապետական զործարաններ: Այնտեղ բազմա տեսակ պահեստներում ու խանութներում զանվում է ամեն տեսակ ապրանքների ահագին պաշար: Այնտեղ մեծ քաղաքներում, այսպէս կոչված՝ ուննոր դատակարգներ շրջաններում արւում է ցնորական ու անհատառաւի, զեզի ու շույլ շքեղութիւն, որի մասին մի ժամանակ թագաւորներն անգամ չէին կարող երազել:

Մտկայն այդպիսի հարստութեան ու շքեղութեան միջոցին թնջ միճակի մէջ և թնջ են անում բանտը ժողովրդի ահագին ընդհանրութիւնները՝ մաստանկը (masse):

Նրանք ապրում են զրեթէ նոյնպիսի աղքատ ու բաղմաշորշար, նոյնպիսի մտածանք ծանրաբեռ ախառութեան ու գրկանքներն մէջ ընկղմված, նոյնպիսի շինանալով թէ ինչ կլինի մաղն իրենց հետ, որչափ և մեր հայաստանցի զիս գային: Չանտղանութիւնը յոկ այն է, որ այդ երկու թու ասնիւրի այդպիսի միճակի պատճառները տարբերվում են: Հայ զիս գայու զլիսն թուտաութիւնները տեղում են մէկ անկարգ ու վայրենի կատարարութեան կողմից, որն իրենութեանը ու սկզբունքով զէմ է ամեն տեսակ առաջադիմութեան. տեղում են ահագին հարկերի ու ամենայն խանդավայր կարգապարթիւնների և զրանց

զործադրող պաշտօնականների շարժով տեղում են վայրենի ցեղերի կողմից, և կամ տեղում են բնութեան զանազան անմիա խաղերի շարժով (ինչպէս երաշա, կարկուտ և այլն): Իսկ եւրոպական սրբաշարաբար, այլ կերպ զրկված թեւերով ինքնուրոյն գոյութիւն ունենալու կարելիութիւնից, յայտնվում է ճորտ դրամաւորը ճիւղն, անդադար զոչ է կոտորել երապրատացիայի, շնչին դրամական փարձաւորութեան անկանխութեան ենթակայ: Այս գործում է շրինի թէ այսօր կամ փոքր որ և է պատճառներով արձակեն իրեն զործարանից, զրկեն իրեն քրոնաթոր, արիւնալուրջ ախառանքից, պատճառներ, որոնց համար նա գուցէ նոյնքան պատախառնաւոր ու մեղսագար է, որքան և մեր գիւղացին քիւրդի առջև: Այս ահա նրան վտարելին զործարանից կամ զրկելին դրամաւորը հողը ցանկ վարելու իրաւունքից, և ահա նա փոքրի մէջ տեղն է ընկած, նրան է վիճակված լինել սովամահ, մինչ նրա շուրջ հեզնական ու լալը, ծագրով կուտ, փրփրում է գովված Փարիզի կամ Վեդոնի շույլ ու ցնորական շքեղութիւնը:

Այս եւրոպական բանտը դատակարգերի այդ զժրաղջ ճակատագիրը, առեարականութեան իրաքանչիւր նոր քայլն անելիս առաջագիմնութեան ուղիի վրայ, առաւել ու առաւել նսնմանում է: Արբան մեծանում, ստուարտում են առեարական ոյիւրը: Եւրոպայում, այնքան զգալի կերպով այդ ոյժերն անցնում են սակաւաթիւ, միւսներից առելի զօրաւոր, դրամաւորների ձեռքը և դրա հետ միասին ընկնում է զրանց ձեռքը և՛ բազապական (politique) զեկը: Իսկ ժանր սրճեատաւորները, մանր զործարանատէրերը, զիս գայններն ու ժանր հալաւորները կամայկա մայ քայքայվում, մարկանում են և անցնում չքաւոր ու խեղապէս իրաւաւորի սրբաշարաբարի կարգիցը: Արթական հարստութեան (դրամաւորլիսի, կապիտալի) ու քաղաքական զեկի մի և նոյն ձեռքն այդ կերպով ընկնելը մի կողմից, և բոլորովն աղքատ, ախառութեան վարժի կարօտ ժողովրդային մասնաները միւս կողմից՝ այդ հանգամանքը ծագեցնում է նրանց մէջ սարօրթնակ մրցումն ախառանք որոնելիս և այդպիսով առելի ու առելի է ցածրացնում այդ վերջինների, ժողովրդային ընդհանրութեան, բարեկեցութեան ընդհանուր մակերեւոյթը և, ընդհակառակը, առաւել զօրացնում ու խառայնում առաջինների, ուննորների, անգուտ ընտախորթիւնը:

Բնական է, որ եւրոպական ամբողջ հասարակութեան այդ երկու մասի անջատվելը և երկու մեծ, իրար հակառակ դատակարգ կողմիւրը սկսեք է զրանց մէջ պատեքողմ ծագեցնել, պատեքողմ կեանքի և մահի: Այս պատեքողմը ծագել է, և օրից օր ընդունում է առաւել սուր, անհաշտ ու կատաղի կերպարանք: Եւրոպական սրբաշարաբար, առաջնորդութեամբ առաջողէմ ինտելլիգենցիայի բաւաղոյն մասի, շտապում է կազմակերպել իրենից յեղափոխական խրոխտ զօրաղունտ, որը պատեքողմում է հիմնովին կործանել և կրկին նոր սկզբունքներով կառուցել ժամանակակից, այսինքն՝ բ ու բ ու ա կ ա ն, հասարակական կեանքի ամբողջ կազմակերպութիւնը: Ե՛

այն ժամանակ, միևնույն այն ժամանակ, երբ այդ մեծ գործը կիրականանայ. երբ ջնջված կլինի մարդկութեան բաժանումը երկու առանձին մասերը, մեկը՝ ունեւորների, միւսը՝ շունչորների գասակարգ. երբ տնտեսական (économique) ախարհում, — այդ զլխաւոր հիւրը մարդկութեան գոյութեան, — կսկսէ տիրել հաւասարութիւնը եւ իւրաքանչիւրն իր սեփականութիւն կհամարէ այն, ինչ ինքն է արդիւնագործել, — միմիայն այդ ժամանակ կուտուրախ ու քաղաքակրթութեան բոլոր բարիքները կլինեն պատկանելիութիւն, սաւայտածք (bien) ձգտութեանը ինչ է ոչ թէ մեկ ափ տրիւնախում առանձնաւորելիաների (privilegie) :

Մենք չառ կ եզրվենք մեր յօդուածի զլխաւոր նպատակից, եթէ սկսելիք մանրամասնաբար նկարագրել եւ բարդանալ կեանքի ներկայ պայմանների բնատուր թիւերը եւ այն պատճառները, որոնք անխուսափելի են դարձնում սօցիալական յեղափոխութիւնը: Մէկ ուրիշ անգամ զուցէ մեզ յարմար ստիժ պատահէ վերադառնալ այդ հարցին: Իսկ առայժմ առանձնապէս շեշտելու արժանի կէտն այն փաստն է, որ ժամանակակից առաջադիմութիւնն ու կուտուրան հանդիսանում են իրրեւ մարդկութեան բազմաւորութեան ու բարօրութեան անհրաժեշտ պայմաններից մէկը մրցան, մի պայման, որին կարող ենք անուանել արաւարին պայման. օրինակ, անառախ ներկայութիւնը յայտնվում է մի պարզ արտաքին, բայց եւ անհրաժեշտ պայման աներ կատարանելու համար: Ասկայն որ այդ բազմաւորութեան ու բարեկեցութեան մարդկութիւնն իսկապէս կարողանայ հասնել հարկաւոր է եւ մեկ այլ հիմնաւոր պայման. հարկաւոր է, որ քաղաքակրթութիւնը դադարէ լինել մի յայտնի գասակարգի յատուկ սեփականութիւն լինելու շահերին ծառայող, այլ նա պէտք է դառնայ ա մ'ն ք ի պատկանելիութիւն, ամենքի ստացուածք, ընդհանրութեան օգտին ծառայող:

Իսկ այս վերջինին հասնելու համար պէտք է ժողովուրդը բարձրանայ մինչեւ մի յայտնի գգալի առաջնան ինքնաճանաչութեան ու քաղաքական պիտի, որին կարելի է հասնել ժողովրդային կրթութեամբ, պրօպագանդան ու ազդեցիկան անհնաւոր միջոցներ:

Այսպէս, եթէ հիմա մի բօպէ ենթադրենք, թէ մեզ մօտ, Հայաստանում, յանկարծ մեկ ինչ որ հրաշքով երկւան երաւ ոչ իսկ երկաթուղու մի գիծ, այլ եւրոպական ժամանակակից այլ կուտուրան, իր հազարակեցութեան ուղիների ստաւար ցանցերով, իր մեծամեծ գործարաններով, իր բազմամարդ քաղաքներով, իր բոլոր հարստութիւններով շքեղութիւններով եւ նոյն իսկ իր մինչ յայտնի աւախան ունեցած քաղաքական ազատութեամբ, բայց այդ ա հանցերձ ձգտութեանը, որպէս այժմ, դարձեալ մտացած լինէր իր ազիտութեան մէջ, լինէր անկարեկից գեպ իր ճակատագիրը, — մեր վերաբերութիւնը գեպ այդ երեւոյթը մեր մինչեւ հիմա յատաններից պարզ կերպով կարելի է եզրակացնել: Մենք, հասկանալի է, չլինք տրանապարտ կրեւորելի, բայց եւ մեր հրճութեամբ դրա առիթով կլինէր քաղաքականութիւնը: Մտածելով ամբողջ ձգտու-

ղի շահերի, ինտելեկտների մասին եւ ոչ որ եւ է առանձնաւորելիան խմբի վրայ, միայն որն այդ պարագայում կօղակէ այդ լայն քաղաքակրթութեամբ, մենք կանտիք օյդ ժողովրդին. — Կու տեսնում ես քո շարք հարստութիւն ու լիւթիւն, դու տեսնում ես կարելիութիւն ապրել աւելի բաւ, աւելի մարդաւարի, քան ապրում էիր մինչ այժմ. եւ հիմա դու ապրում ես. քեզ այլ ես չեն ճշում ոչ բարբարոսութեան վայրենի երեւոյթները, ոչ բնութեան անմիա խաղերը, որոնցից այսօր աւելի քիչ կախում ունես, ոչինչ կայ հիմա այն երեւոյթներից որոնց մէջ առաջ դու ապրում էիր, բայց սաս, արդեօք դու դրանից աւելի քաղաւոր դարձար, արդեօք քո կեանքդ աւելի հանդիստ է այժմ, արդեօք քո կենսական պայմաններն աւելի բարեկարգ են: Այ՛ն քո նախկին նա հասկնալիան կեանքդ, իր հնազարեան սովորութիւններով, նախապաշարու մեներով եւ այն անցեալ բարբարոսական բեժիմը, որի ապի երկար դարերի ընթացքում դու կրեցիր անչափ հալածում ու թշուառութիւն, — պատմական օրայմանների, մարդկային կեանքի նորանոր հոտանքների շնորհով դրանք կործանվեցան, պէտք է անպատճառ կործանվին եւ յանուն մարդկային առաջադիմութեան: Մենք պիտի գտն լինենք, որ այդպէս եզրաւ. բայց այն ժամանակ պէթ մինչեւ մի յայտնի աւախան գեւ կրում էիր քո մէջ քո ժողովրդային առանձնապատկանութիւններն ու մարդկային արժանաւորութիւնը, իսկ ինչ եւս այժմ ճուր ժուական քաղաքակրթութիւնն իր արխնածարաւ ճիւրանները գապանաբար ու տակաւով խրել է քո բազմաշարքար մարմնից մէջ, եւ եթէ դու չես պատերազմի նրա գեմ, չի անցնել եւ մի քանի տասնեակ տարիներ, դու կդառնաս օգորմելի ճորտ, դու կդառնաս բանուղ ա նասուն: Դատարի, ուրեմն, վարիներ, վերջնել ճակատագիրդ քո ձեռքից եւ բոլորը կաղնակեղայել այնպէս, ինչպէս, լաւ է քեզ համար եւ ոչ այնպէս, որպէս լաւ է մի աւազակ էրազուտատուոր անհարազատ խմբի համար: ...

Ասկայն հրաքների դարը վաղուց անցել զնացել է, հետեւաբար ե քաղաքակրթութիւնը յանկարծակի կերպով չի լինել կրեւորից մեր երկրի վրայ, այլ նա կգայ Եւրոպայի արեւմտից եւ դոյն պայմանը մեզ գնում է աւելի վաւ ու աւելի վտանգաւոր դրութեան մէջ:

Ներկայումս գրեթէ բոլոր առաջնակարգ պետութիւնները մրցում են իրար հետ քաղաքարոյր խօսքերով ու խոստումներով, որ նրանք ուղղում են «արեւելքն», դրանցից իւրաքանչիւրը շտապում է գէպ «արեւելք» իր ծառայութիւններով ու քաղաքակրթութեամբ: Բայց խնդր «արեւելք», նրան չատ սուղ կնտէ իր մեծ եզրայրների, եւրոպացիների, այդ սիրահարական խոստումները: Եւ ինչ կերպով արդեօք կարող ենք մեկնաբանել եւրոպացիների այդպիսի ձգտումների նշանակութիւնը: Գիտնական սճով ասելով այդ ձգտումներն իրենցից ներկայացնում են պատերազմ շուկայի (marche) համար ե իրենց յետապոյ գարգացումով դառնում են կօլօնիաներ (colonie) մեզ բերելու ձգտումներ: Եթէ Անգլիան, Գերմանիան, Պուստալանը եւ ուրիւնք ինտրիգներ են անում

Բ. Գրան աւերակների մէջ, քանակում են գրան և նրանցից խրանջիրը ձգտում է հաստատել իր ազդեցութիւնը գործ-Արխայում, դա նշանակում է թէ՛ նա մտադիր է ուշ կամ վաղ այդ երկիրը դարձնել իրեն կոթնիստ Բայց պետք է ունենալ գոնէ հէնց շնչին հատկացութիւն թէ՛ ինչ է նշանակում կօլօնիստական քաղաքական հոսանքի և նր մարդ սարսափէ այն տեսարանից, որը ներկայացնում է այդ քաղաքականութեան հետևանքները: Պա մէկ անգութ, տնարդի է քսպլուատացիա է, որ զոր ծագում է մէկ առաւել քաղաքակրթված ու առաւել ու մեղ ժողովուրդ մէկ ուրիշ ժողովրդի վրայ, էրսպլուատացիա, որ զործադրվում է քաղաքակրթութեան ու գիտութեան միջոցով, էքսպլուատացիա, որ աւելի վատ է քան բարւարտական յարձակումները: Հնդկաստանի գրգռողը հակառակորդ յայտնի է: Այդ ժողովուրդը հնագուրեան բանաստեղծութեան ու կուլտուրայի ժողովուրդն է, բանաստեղծութիւն ու կուլտուրա, որով մինչ այժմ սնվում է ամբողջ Ասիան. այդ ժողովուրդը բնակվում է երկրագնդի թերևս ամենալաւ կտոր հողի վրայ. Բայց ինչ դարձրեց գրան գովված, լուսաւորված Անգլիայի իշխանութիւնը: Քաղաքական ու սնտեսական հնարաւոր միջոցների երկայն շարքով նրան աջողեցաւ Հնդկաստանը դարձնել վարմանալի արդիւնաբեր մի վայր և նրա ժողովրդին՝ բանող անասունների միջիծնաւոր հօտ: Քաղաքակրթութեան վայրուն գիւտերի ամեն մի նոր միջոցը, ամեն մի նոր ներմուծութիւնը երկրի մէջ պատճառ էր յայտնվում Հնդկաստանի հարիւր հազար կեանքերի կորստին: Որ կտաւարգործական շողիէ գործասեղանի՝ մեքենայի ներմուծելուց յետոյ Հնդկաստանի կառավարչական անգլիական պարլամենտին յայտնում է հետեւեալը. «Հնդկաստանի դաշտերը բոլորովին սպիտակ են, թափթիված լինելով հարիւր հազար ջուլֆանիների ոսկիներով, որոնք աշխատութիւնից դուրի, քաղցած մտնում են»: (Կ. Մարքս, «Կապիտալ» հատ. 1) Իսկ ժամանակ առ ժամանակ յայտնվող ներմուծութիւններ Հնդկաստանում քիչ չեն կատարվել: Իսկ երբ, վերջապէս, հասած ծայրահեղ յուսահատութեան, Հնդկաստանի ժողովուրդը փորձեց ապստամբել այդ բռնակալութեան դէմ, Անգլիացիներն այնպիսի վայրենի կատաղութեամբ սկսան ժողովրդին զսպելը «հանդարտեցնել», որի օրինակը թերևս չկայ պատմութեան մէջ: Լուսաւորված Անգլիացիներն աւելի վայրենի, արիւնարբու, ամարդի յայտնվեցան այդ դէպքում, քան վայրենի թաթարներն ու քիւրդերը: Ամբողջ քաղաքներ, գիւղեր հիմնովին քարուքանդ էին անում, մարդերին ոչնչացնում էին գազանային վայրագութեամբ ու անգթութեամբ և այնչափ, որ դաշտերը, ճանապարհները ցանված էին մարդկային արեան գետերով. գերիների զլխին կատարում էին այնպիսի խստատիրա ու ազիխարչ բռնութիւններ, որոնց հանդէպ մարդկութիւնն աւազած մնացած էր: Այդ հարուածների շնորհով Հնդկաստանի ժողովուրդը մինչ այժմ չէ կարողացել իր գլուխը բարձրացնել և հազիւ թէ երբ և է կարողանայ:

Մենք ամենևին չենք ուզում յայտնվել շարագուշակ

մարդարէ մեր ժողովրդի վերաբերութեամբ, նախագուշակելով նրան զոյնանման սաբաղայ: Բայց եթէ մենք, փոխարէն մեր բոլոր ոյժերով ջանալու ժողովրդի մէջ բարձրացնել ինքնագործունէութեան ոգին, սպասենք որ մտիւն կատարութեան ու Կերտալայի կողմից. եթէ մենք, փոխարէն խորունկ քնից աւ տգիտութիւնից սթափելու ժողովրդին, նրան օրօրենք վարդէ յոյսերով քաղաքակրթութեան բարխնների վերաբերութեամբ, որոնցով մեղ ուզում են բազաւորացնել գերմանացիներն ու անգլիացիները. եթէ մենք, փոխարէն երիտար ժողովրդի մէջ և յանուն առաջադիմութեան գոչելու նրան դէպի պատերազմ ու սպառնալուքիւն ընդդէմ ստրկութեան ու օտոր լծի, սկսենք մէջք ծուկ ու շողորթութիւններ սլփոնել զանազան գահերի տոջն և աղքատել նրանց օգնութիւնը, — այդ բոլորից յետոյ սով գիտե՛ թէ արդեօք մեղ հետ էլ չի պատահիլ այն, ինչ պատահեցաւ Հնդկաստանի ժողովրդի հետ, թէ արդեօք քաջբայիտ ու մեծնող թիւրքիայի վայրենի ճիրաններից անցնելով մենք չենք յայտնվիլ քաղաքակրթված Գերմանիայի, կամ Անգլիայի, կամ Ռուսաստանի ոսկեղձած երկաթէ տրտախի վանդակում:

Մենք պարտաւորվեցանք երկար կանգնել ժամանակակից քաղաքակրթութեան ընդհանուր կերպարանքի նկարագրութեան վրայ և շատ քիչ տեղ է մնում մեզի ստանձնապէս մատնանիլ անել թէ՛ արդեօք մօտիկ ապագայում մեր ժամանակակից հասարակական պայմանների ներկա՛ յութեամբ, ինչ ազդեցութիւն կունենայ մեր ժողովրդի շահերի վրայ մասնաւորապէս երկաթուղի անցկացնելը: Սակայն աչքի տոջն ունենալով մեր բոլոր մինչև հիմա առածները, այդ կէտն էլ կարելի է լրացնել այստեղ կարճ կերպով:

Երկաթուղու գիծ անցկացնելը գործ-Արխայում յայտնում է առաջին քայլերից մէկը, որ կաններ, այսպէս կոչված, կապիտալիստական (capitaliste) կուլտուրայի զարգացման ուղիի վրայ, որն այսօր թագաւորում է Կերտալայում: Թէ արդեօք դէպ ուր աօրաւ այդ ուղին Կերտալային մենք տեսանք արդէն: Իսկ թէ մեղ էլ մի ճակիւմ է անցնել այդ երկար ու դժուար ճանապարհը, որով ամենաթանկ դահարեութիւններ տնկելով ընթանում է այժմ Կերտալան, — այդ խնդիրը չափազանց բարդ է և դրա մասին խօսել այստեղ այս անգամ մենք յանձն չենք անում: Սակայն այդուամենայնիւ կասնեք լոկ այն, որ վերայիշած ուղիի վրայ մեր առաջին քայլերն անելիս, յամենայն դէպս մեզի միճակված է կրել այն, ինչ կրել է դարուս առաջին կիտում և Կերտալան, որովհետև կապիտալիստական կուլտուրայի զարգացման օրէնքները միւտ ու ամեն տեղ մի և նոյնն են:

Այդ սրօցէսը Կերտալայում կատարվել է հետեւեալ կերպով: Հէնց որ արդիւնագործութեան ճիւղում երևան է եկել մի նոր դիւտ կամ արդիւնագործութեան նախկին ձևերի նոր կատարելագործութիւն, որի գործադրութեան համար պահանջվում են մեծամեծ ծախսեր, այդ դիւտը

կամ կոտորելագործութիւնն ինկոյն և եթ զպնում էր բացառիկ մեղաւորն ու սեփականութիւն որ և է հարուստ ընկերութեան կամ մասնաւոր գրամատերոջ, որի բախինն էր լինում և այն գիւտի բոլոր վաստակն ու օգտակարութիւնը: Իսկ մանր արհեստաւորները և առհասարակ, արդիւնագործութեան հին գործիքներ ունեցողները քայքայվում, անանկանում էին, որովհետև անոյժ էին հանդիսանում մրցելու առաւել արդիւնաբերող մեքէնայագործ ախատութեան հետ: Այդպէս եղաւ, օրինակ, Անգլիայում կտաւագործական շոգիէ մեքենայի ներմուծութեամբ, և մինչ այն ժամանակ ջուլհակների (կտաւագործ) ամբողջ գիւղեր, որ պարսպում էին կտաւի ձեռագործութեամբ, արագ կերպով քայքայվեցան, հարստահարվեցան և սկսան վարձով բանել գործարաններում և կամ մնացին կտոր հացի կարտու: Այդպէս եղաւ և Ռուսաստանում, երբ երկաթուղին սկսաւ գոյութիւն ունենալ այդտեղ. չուկայի արեւտրական ապրանքների տարու բերը, քարաւանները, որ հարիւր հազար ձեռներին տալիս էր պարսպումը, միանգամայն շքայան, դրանցով պարսպող հարգիւցին բազմութեանը չարտելով փողոցը:

Երկաթուղու գծի անցկացնելն ունի զարձնալ մէկ ուրիշ նշանակութիւն: Այս ոչ միայն յաղթում, սեփականացնում է իրեն արեւտրականութեան մի յայտնի մեծ ճիւղ, այլ և իր ստոր կոտորել երկրի ներքը, ժողովրդային արնտեսութեանը ենթարկում է ամենաարմատական յեղաշրջման: Այսպէս, այնտեղ, որտեղ գեւ երէկ գոյութիւն ունէր արհեստաւորների ու առեւտրականների մէկ ամբողջ բազմութիւն (գործիչներ, ջուլհակներ, հրմներ և այլն), որ բաւականութիւն էր տալիս իր գաւառի պէտքերին, այսօր, երկաթուղու գծեր անցկացնելուց յետոյ, կառուցվում են գործարաններ, որոնք, շարժով հատրդակցութեան յարմարութեան ու ամանութեան, իրենց սալը բանքները մատակարարում են ոչ միայն մի գաւառի բնակիչներին, այլ և ամենահեռաւոր սեղեր են անցնում, հարուստ հարուստի վրայ հասցնելով մանր արհեստաւորներին, առեւտրականներին, որոնց մեծ մասն իր ապրուստը հայթայթելու միջոցներից իսպառ դրկվում է: Բացի դրանից, երկաթուղու ներմուծվող հողագործութեան ու գիւղատնտեսութեան հնաձե կերպերի նահապետական հիւմքերը խախտում, քայքայում է: Տարով գիւղական արդիւնագործութեան առեւտրականութեանը մէկ ուժեղ մղումն գէտ առաջ և հողագործական արդիւնագործութեանը մի նոր կերպարանք, անհամեմատ աւելի լայն շրջան ու գործութիւն, երկաթուղու ներմուծվին այդպիսով արագաբար ոտնեղծում ու զարդացնում է գիւղացիների մէջ արդիւնագործական ոյժերի անհատասարտութիւն, որն էլ մրցման օրէնքի հիման վրայ, պատճառ է դառնում գիւղական բնակիչների մեծամասնութեան լիակատար քայքայման ու անանկանութեան:

Այսպէս մենք տեսանք որ երկաթուղու գծեր անցկացնելը Փոքր Ասիայում, ունենալով հանդերձ իր բարիքներով ու կողմերն աւելի հետաւոր սպաղայում, զլիաւորապէս կարող է առաջացնել ևս ամենաուրջ ու ծանրակէի

բարգուծիւններ ժողովրդային անտեսութեան մէջ և ունենալ շատ նշանաւոր ու տխուր հետեւանքներ: Այդ բանը մեր ինտելիգենցիայի առաջագէտ մասի վրայ ստանձնում է պարտականութիւն լուրջ ուշադրութիւն զարձնել ժողովրդի կեանքի այդ ծանրակէի խնդիրների վրայ և գործ ա գ ր և ւ ւ ր ո լ ո ր ա հ ր ա թ և շ ա պ ա յ մ ա ն ն և ր ք, առաջն առնելու համար այդ պարտաւորում ժողովրդին հասանելի ու հարուստող այն ամեն աղէտների, որ կարող են նրան հանգրիւկել մեր պատմութեան այդ նոր Փայտիւնում:

Բայց ինչ ենք կարող մենք անել այնպիսի քաղաքական պայմանների ներկայութեամբ, երբ մեր ճակատագիրը գտնվում է մեզ թշնամի ձեւքում, երբ ժողովուրդը լիապէս ճնշված է սարկութեան, ազքատութեան ու սղիտութեան լծի տակ, իսկ ինտելիգենցիան զուրկ է ամեն իրաւունքներից, ամեն կարելիութիւնից, որով հնարաւոր, լինէր օգնել ժողովրդին Շատ բնական է, որքնին, եթէ մենք այդ հանգամանքում առաւել քան երբ և է կտեսնենք այն համոզման ճշմարտութիւնը, որ մենք պէտք է ունենանք կեանքի բարեկամող պայմաններ, որոնք հայ ժողովրդին հարստացնեն մարդկային, քաղաքացիական ու տնտեսական իրաւունքներով, որոնք հնարաւոր զարձնեն նրա կեանքի սոցիալ տնտեսական աշխարհում իրանկանացնելու այնպիսի արմատական բէֆորմներ, որ ծառայէին յօգուտ ամբողջ ժողովրդային հանրութեանը, որով և կիրկէին դրան կապիտալիստական կուրտուրայի աւերիչ ազդեցութիւնից: Շատ բնական է նմանապէս, եթէ մենք վերոյիշած հանգամանքում առաւել քան երբ և է կտեսնենք և այն համոզման ճշմարտութիւնը, որ բնագիտական նի իրաւունքներ ունենալու և մարդկային զարգացման դիմելու համար մեզ անհրաժեշտ է միանգամայն ազատվել ճնշող ու անարդ լծից, ազատվել միակ նպատակայարմար միջոցով ժողովրդային ապստամբութեամբ:

Պ . Վ .

ՄՍԱՅՐ ԱԶԳԱՎՆԱԾՐ

Կ . Պոլսի և Չմուսիայի մի քանի հայ լրագիրներ վերջին ժամանակներու հաղորդեցին հետեւեալ լուրը: Իբր Յուլիս ամսի վերջերը կաթողիկոսական ամարանոց Բիւրականում ինչոր «շարագործներ» սպաննելու գիտատրութեամբ հրացանի գնտակներ են արձակել Մակարի վրայ, երբ սա գտնվում է եղել իր սենեակում: Բայց գնտակը վրիպելով իբր զիպչել է գաւազանակիր Սահակ վարդապետին, որ այդ ժամանակ Մակարի մօտ էր գլուսվում, նրան ծանր վէրք պատճառելով: Թէ իբր դրանից անբասում՝ Մակարին օգնութեան է կանչել նահանգապետին, պրօկուրօրներին, հայ ու թուրք ազաններին, ժանդարմների պետին իր արբանեակներով, զօրքին, կօզակներին և այլն: Թէ իբր Մակարի վախն այնչափ է

եղի, որ Թիֆլիս մեկնելիս, իբրև խնամարհ ծառայ իր գոտոզ տիրոջ, սուսայ միտպետի, հետ տեսակցելու, Լեռնանից մինչև Թիֆլիս նա չքաղաքատված է եղել կողակ ներքի սառար խմբով:

Այդ բոլորն, իբրև լուրեր, որ գաղտնագէտ թափառում են հայ հասարակութեան մէջ, թերթիս խմբագրութիւնն էլ ստացել է մանաւոր նամակով թէ արդեօք որքան գրանք իրական պատկեր են ներկայացնում, մենք չենք կարող տեսնել Վահայն կարելի է հաստատել այդ լուրերի ճշգրտութեամբ. կարելի է սպասել այդպիսի քայլ հասարակական շահերին նուիրված և անձնական շահերը մոռացած «չարագործներին» . կարելի է բացատրել ու սաշտարանել այդ «չարագործներին» քայլը, որի շարժառիթը մեր հասարակական կացութեան անտանկի պայմաններն են, որոնց շնորհիվ ազատ խօսքը, ազատ գործը, ժողովրդի կամքը, իրատենքը, ձայնը խեղդված են և իրենց արտայայտութեան համար դանդաղ են միայն բիրտ ու ճիւղ ճանրան խոց էթէ այդ լուրերը միմիայն լուրեր են և խեղճ Վահարն իր գոտանում կեանքը խողող կերպով դեռ վարում է, սպասելով «նախախնամութեան հարուածին», այսուամենայնիւ այդ լուրերն ինքն ըստ ինքեան նշանաւոր են: Ինչո՞ւ պէտք է ծագէին այդպիսի լուրեր, էթէ արդարև ցարին սիրելի Վահայը սիրելի է և հայերին Ինչո՞ւ պէտք է տեղի ունենային այդ խորհրդաւոր լուրերը էթէ հայ հասարակութեան մէջ գոյութիւն չունենար այդպիսի լուրեր տարածելու արամագրութիւն: Այն, այդ լուրերը նշանաւոր են այն տեսակէտից, որ նրանք յայտնվում են ճշմարիտ արտայայտութիւն հայ հասարակութեան վերաբերութեան դէպ իր հոգեւոր պետք, դէպի Վահար ազգամիտութեամբ: Այն դժգոհութիւնը, որ Վահարն իր ազգամիտ գործունէութեամբ ասածայրել է հայ ժողովրդի մէջ, վաղ թէ ուշ պէտք է գտնէ իր ելքը և առայժմ նա առկաին արտայայտվում է հասարակութեան բացարձակ արանջով Վահար ազգամիտի դէմ: Վահարի ազգամիտ գործունէութիւններն օրից օր ընդարձակվում ու աճում են. ընդարձակվում ու աճում է գիտնապէս և հասարակութեան դժգոհութիւնն ինարկական Վահարի ազգակորոյս գործողութիւններից. ընդարձակվում ու աճում է և հասարակութեան ասելութիւնը դէպի նրա անձնատրութիւնը:

Եւ այլ կերպ չի կարող լինելը

Յնտ նայեցէք մի բօպէ անցած տարիների անցքերի վրայ, որոնք առաջացան Էջմիածնի մի ապերախ ջանքով — սրբան աւերակների կիտվեցան իրար վրայ մեր ազգային կեանքում՝ սկսած այն օրից, երբ նրա ձեռները դիպան ազգային գործերին:

Արդէս կմաղբառախ պիտի իր մանդաղի հարուածով, այդ ձերներն ինչ ազգագուտ գործի գիտչում էին անկենդանութիւն ու մահ էին նրան բերում: Այստեղ Վահարն իր տգէտ և ծիրացած ու ժիթած պիտի տէր անձով, բոլորովին անընդունակ իր պաշտօնի մէջ: Այնտեղ հայոց հարիւրաւոր գաղտնիք, որոնց ոգին, այժմ, ծառայում է սուսայ արիւնածարաւ միտպետի հրամանով նա

կրճատից, կարտից, սնչացրեց խորհրդայնութեամբ ու կեղծելով Մէկ արեւ տեղ, Պէշիկթաշի գերեզմանատան գործում, Վահարի ստոր խնամարհութիւնը փայրելի սուրբանի տաճի և այն հարուածը, որ նա ավելց այդ գործում ստորոջ թիրքաւայ ժողովրդին, միանգամայն զոհելով նրա շահերը յօգուտ թիրքի շահերին: Այդ տիրապէտ տակ գործն աւարտ ստացու յօգուտ թիրքի Վահարի հրամանով, որն իր կրակից կատարեց խնամարհար սուսայ կատարարութեան գաղտնի արտուէրները: Մէկ այլ կողմ մի շարք իրողութիւններով ստացուցիւ Վահարի նախատակի ու անարդէլի տարկութիւնն ու վախր սուսայ կատարարութեան հանգէլ, որին ծառայելու համար նա անտանկի է անում կաթողիկոսական անձի արտաբեր, կաթողիկոսական աթոռի պատերը և, որ զլիստարն է, ազգային արժանապատւութիւնը, և իբրև վարձատրութիւն, սուսայ կատարարութեան կողմից նա վայելում է ամենախորին արհամարհանք, իսկ հայ ժողովուրդը ձեռք բնաւոր ու հարուածիլ թախարակներ: Արտացոյց գրան այն իրողութիւնը, որ Վահարը սուսահարուտակ հոգեւորական բարձր աստիճանաւորներից յատկանշելի արտաբեր է ուղարկում սուսայ կատարարութեան գաղտնի հրամանով, ինչպէս օր. վ. Խարէն Վախանէլին, եւ, Ալիստակ, սին էլ այլ մի թիրքահարուտակ հոգեւորականներին վարում սուսայ հոգից, ինչպէս օր. եւ, Գրմանեանին:

Այժմ առաւել անտանկի համարձակութեամբ՝ սուսայ կատարարութեան ծնունդ Վահար կաթողիկոսին իրեն գործունէութիւն գարձրել է և՛ իսպառ քոյքայնի հայոց զպրոցի ու եկեղեցու գործութիւնը, որ կայանում է ժողովրդական բնորոշական սկզբունքի մէջ: Վերայրէք այդ սկզբունքը, որ ցարձնաբար Վահարի ու սուսայ կատարարութեան փայտայած երազն է, նրանց բարձր գործողութիւնների զլիստար նախատար, և այդպիսով բնապետական կենտրոնականութիւն մայրէք գաղտնի ու եկեղեցու կատարարութեան մէջ, կատարարական ամբողջ գործութիւնը յանձնելով կաթողիկոսին, ինչպէս այսօր Հոսովի ստալն է, կատարեցէք այդ երեսից մէկը, որ կարող են փոխադարձաբար միմեանց հետեանք ու պատճառ լինել, — գուք կապձեր մի տեսակ գէտ պատկան հոգեւորական կատարարութիւն, որն ունի իբրև միտպետ կաթողիկոսին. գուք կաշնչայնէք հայ ժողովրդի բարձր բաւտնները իր գաղտնի ու եկեղեցու գեկապարութեան վերաբերութեամբ. գուք կատարէք հոգեւորական բնապետներ, որոնք բարձրվին շին մասաւր (և ազատ կլինեն այդ ստորից իրենց բնապետական սկզբունքի շնորհով) ժողովրդի, նրա գաղտնի ու եկեղեցու շահերի մասին, այլ նրանց միակ ջանքը կլինի այնուհետև պահպանել իրենց բնապետական գիրքն ու իրենց շահերը:

Այդ հակամտովրդային, հակաազգային գործը Վահար ազգամիտան այսօր ճղում է իրականացնել, օգնութեամբ իր շահամոյ ու բթամիտ արբանեակների մի խմբակի և սուսայ կատարարութեան:

Իբրբի այդպիսի միճակի ներկայութեամբ անընտան ու գործունայի կլինէք, էթէ հայ հասարակութիւնն իրեն

մեկերս թեան յանձնէր և որ և է միջոցով, որ և է կերպով, թեկուզ հենց բիրտ ոյժով, չապացուցանէր իր գծաւ հոթիւնը: իր ընդդիմադրութիւնը, իր ատելութիւնը Մակար ազգամիտս և նրա ազգակործան գործունէութեան վերաբերութեամբ:

Բայց իրերի այդպիսի դրութիւն արդեօք կարող է տեսել և չարտնակել առաջադիմեց այդ ուղիով Այսօր հայ հասարակութեան ճիշն այն է, թէ կաթողիկոսը մեզ ճշն չտւմ է՝ մեր իրաւունքները ճանաչով խզել, թէ կաթողիկոսը քանզուս, կործանում է այն բոլոր հիմքերը, որոնք մեր կոյսութեան ներկայ պայմաններում հանդիսանում են պաշտպան ու յետարան ժողովրդի իրաւունքների ու շահերի, թէ մենք չունենք այլ ևս կաթողիկոս, նա մեր բնաբանը չէ, այլ ցարի, թէ, վերջապէս, մենք չենք ուզում այդպիսի կաթողիկոս Քանի որ կաթողիկոս ընտրելու իրաւունքը մերն է միայն, նրան պաշտօնանկ անելու իրաւունքը նմանապէս մերն է: Քանի որ հայ ժողովուրդն է իր եկեղեցու միակ օրինական աւերն ու գեկավարը, ինչպէս եղի է սկսած մեր նախնիքների օրից մինչ այժմ, — նմանապէս նա, ժողովուրդը, որպէս գոնայիսի հանգաւմանքներում միշտ օրինատարապէս գործադրել է իր իրաւունքը, այսօր էլ կարող է գահընկեց անել ազգամիտ կաթողիկոսին և ընտրել մէկ ուրիշին: Հայոց եկեղեցու կանոններն ու դարերից ի վեր ընդունած սովորութիւնները կաթողիկոսին պատասխանատու են համարում ազգի առջև և ազգը միշտ իրաւունք ունի նրա գործուրութիւնների մասին թէ հախ: պահանջելու, թէ նրան պաշտօնանկ անելու և նրա տեղ մէկ այլին բնաբանու: Մի ապետական, բնապետական սկզբունքն առհասարակ խորթ ու անձանթ է հայ ազգային հիմնարկութիւններին և մետատար նրանց շահերին: Կախ և ստաջ ժողովուրդը, ազգը և յետոյ կաթողիկոսը, որ գոյն ժողովրդից ընտրված մի պաշտօնեայ է և ոչ աւելի, որ գոյն ժողովրդի ու նրա եկեղեցու ապաստարան է միայն:

Այն բոլոր հասարակական գործերի գէժ, — ինչ կերպով ու գիմակով, որ նրանք արտայայտվելու լինեն, — որոնք այսպէս կամ այնպէս հանդուս են այն կէտին, որ վնասում են հայ ժողովրդային շահերին, կրճատում կամ հարուստում և կամ ճիշտացում հայ ժողովրդի ունեցած իրաւունքները հասարակական ստորաբնույթով, — այդ գործերի գէժ մարտնչել հայ հասարակութեան լուսարցն մտքի պարտքն է: Այդ հակաժողովրդային գործերն այսօր առաջանում են Լճմիամնի վեհարանից, թեկադրութեամբ ուսուց կառավարութեան քաղաքականութեան: Կրանք իրենց համար ներկայումս՝ այնպիսի հայ ունեն, որի վրայ Մակարն առտուկ ազատութեամբ կարող է աջողեցնել իր շարաննեց գիտումները. այդ հոգը — ազգային դպրոցն ու եկեղեցին է: Պաշտպանել եկեղեցական շահերն ու նրա հեղինակութիւնը մենք յանձն չենք անում. եկեղեցին իր հեղինակութիւնն արդէն կորցրել է և վաղ թէ ոչ նա կկորցնէ և պիտի կորցնէ և՛ իր նշանակութիւնը. մենք գէժ ենք Մակարին, որովհետև նրա գործունէութիւնը վնասակար է ժողովրդային շահերի հասար:

Յանուն ժողովրդային շահերի, ժողովրդային կամքի ու իրաւունքների՝ մենք Մակար ազգամիտսի գէժ ենք և նրա պաշտօնանկ անելն անհրաժեշտ ենք համարում:

Հ Ս Յ Ո Յ Կ Ն Ա Ն Թ Ը

«Եզրայր, մեր կեանք մի ճահիճ է ահագին, Մենք էլ ժողված խեղճ դարօր ենք նրա միջին, Որ չզիտնալով ձանձրութիւնից թնչ անել, Երբեմն ըսկաւմ ենք զուր ազմուկ մենք հանելը»
Incognito.

Ինչպէս միշտ, հայոց կեանքի գլխատր յատկանիշն այս վերջին ամիսներում էլ մեռելութիւնն էր և կամ «չնշին բանից շատ ազմուկ»: Այո՛, ըստ երևոյթին, այն առաջուածն աւելի է համապատասխանում վերջին ժամանակների հայոց կեանքի բնաւորութեան: Մենք ատացինք «ըստ երեւոյթին» այն պատճառով, որ հայոց կեանքում վերջերս էլ խտկապէս, au fond տիրում էր մեռելութիւն և հենց արասրին ազմուկը ծնունդ էր այդ միտելութեան, յատուկ էր հայերի մեռած գրութեան, և, եթէ կուղէք, շնչառութեան պահանջի լակ ժամանատր արդիւնք էր նա: Հայերը շատ են նմանում կրիային. երբ որ նրանց շուրջ օտարն է ազմուկ հանում, վախը նրանց տիրում է և շտապում են թազցնել իրենց դուխը, ինչպէս կրիան իր սահրէ մէջքի տակ. իսկ երբ նրանց շուրջ լուսթիւնն է թագաւորում, կրիայի պէս, նրանք գուրս են հանում իւրենց դուխը սահրէ ծածկոյցի և կրիայի ճիշ արձակում: Խեղճ հայեր . . .

«Ձիւն բանից շատ ազմուկ . . .» Այո՛, կար ազմուկ Կ. Պօլտում, ազմուկ կար նմանապէս և Թիֆլիսում, — հայոց կեանքի այդ «երկու կենտրոններում»:

«Ուզտերն իրար հետ կովեցան՝ մէջ տեղ նրանց ձագերը ձեմվեցան», ասում է ժողովրդական ստաճը: Գոյն բանը պատահեցաւ և պատրիարքական ընտրութեան հետ:

Բարթուղիմոս ու Խորէն Կարալէյ «մեծապաշտօն» հոգևորականներն իրար հետ կովեցան և դրանց միջից բեմ գտրս ելաւ իրիկ Կ. Պօլտի նպատրիարք մինչ այն ժամանակ պապանձութեան ու ազգային գործերի մէջ շխտանկոյ Ալըղեան հոգևորականը:

Եւ ծափ գարկեցին մեր երեւիլի քաղաքազէտ պօսուցի ներքոր բարթու գիմկտեան ու նարպէյեան հոշակաս որ կուտակցութիւններից ոչ մէկը շխտողացաւ համեւ իր նաւատակին: Եւ ծափ գարկեցին այդ երկու կուտակցութիւնները, իւրաքանչիւրը յուսարի որ նորընտիր պատրիարքն իր կողմը կանցնէ: Եւ ծափ գարկեցին նրանք, որ նորընտիր պատրիարքը քաղաքագիտութեան հոտին անգամ անձա նօթ է, և իւրաքանչիւրը նրանցից զաղտնի կերպով յոյս է տածում գարձնել խեղճին իր ձեւերին խաղալիք: Եւ տհա երկու կողմից էլ շտապում են համբուրել նորընտիր պատրիարքի աջը, երկու կողմից էլ շտապում են նրա նտեից ընկած՝ սիրահարական court անել նրան . . .

Կ. Պօլտում կատակցութիւններ են կազմվում հանդիլ

կողմից ոչ իբրև ամեն մէկը հասարակական գործունէութեան մէկ առանձին ծրագիր ու սկզբունքներ ունենալով և խրաբանչիւրն իրենը պաշտպանելով, այլ այնտեղ կուսակցական բաժանումը սրուղ է անձնական շահերի ու գիտումների, արգիւնք է շահամոլութեան, կամ դէմդէկութեան, կամ փառամոլութեան Սկզբունք, հանրական շահեր, ժողովրդի գրութիւն, — այդ բոլորն այնչափ են զբաղեցնում այդ կուսակցութիւններին, որչափ և շինական լեզուն: Եւ Կ. Պօլսի 200,000 ից աւելի հայերից քամված մէկը յայտնվում են այդ կուսակցական խեղկատակները, այդ «չարակիրատ արացունները», իբրև ներկայացուցիչ ժողովրդի, իբրև հոգատար հայութեան վիճակի... Խեղճ հայ ժողովուրդ, ո՛ւմ ձեռքին է գտնվում քո ճակատագիրը...

Թիւրքի և չաղակիրատ տիրացունների ձեռքին դու՛ են թակայ քայքայման, դու՛ խաղալիք նրանց անձնական շահերի, խեղկատակութեան, տգիտութեան, դու՛ նրանց համար դարձած բանող անասուն: Թիւրքի բռնապետական բարբարոս էրապլլատացիան ամենայն կերպ քամում է քո վերջին ոյժերդ, Երկրում հաղորդակցութեան ճանապարհները քո ձեռներով, քո մարմնով, քո բրախերով, քո արիւնով ճրիագար շինել տալիս իր համար, լիովին զրկել լով քեզ քո առօրեայ հաց վաստակելու աշխատանքից. քաղաքական ձերբակալութիւնները կատաղութեամբ շարունակում նա քո մէջ: Եւ միւս կողմից վայրենի ցեղերը սիստեմաբար հրդեհում, կործանում, կոտորում քեզ և քո տուն ու տեղ: Իսկ ի՞նչ են անում քո խեղկատակ «ներկայացուցիչները»: Նրանք «կուսակցական», ազնուկ են բարձրացնում «ազգային ժողովներում», իրենց կարծիքով Փարիզի երեսփոխանական սրահում...

Ռուսաց զորաբազուկ կայսրը կովկաս էր... Տեղական վախկոտ հասարակութիւնը խնկարկում էր նրան, տեղական սուս, հայ, վրացի մամուլի լեզուն փայլում էր իր ստորութեամբ ու չղզորթութեամբ: Մի քանի լրագիրներ այդպիսի գիրք բանեցին, իբր ունենալով մի քանի «հասարակական նպատակներ»: Նրանք իբր «քաղաքականութիւն» էին բանեցնում... Ողորմելի քաղաքականութիւն... Սակայն ի՞նչ սծական տանք այն հայ թերթի բին, որ ստորանում էին բռնապետի սաջև միայն ստորանալու համար, կեղծաւորում, չղզորթում էին նրան կեղծաւորելու, չղզորթելու համար միայն... Մինչդեռ բռնապետի վերաբերութիւնը դէպի հայերը ոչ միայն պաղ, այլ և լի էր արհամարհանքով:

Ռուս բռնապետը տեսակցութիւն ունեցաւ հայ բռնապետ Մակարի հետ. խորին արհամարհանք կայսրի կողմից դէպի Մակարը և սրա կողմից դէպի կայսրը ստրկական ստորութիւն, — ահա այդ տեսակցութեան պատկերը մինչ այժմ հասած տեղեկութիւնների համեմատ... Առայժմ այնքանը մեղայտնի է այդ տեսակցութիւնից, որ Մակարը դիմելով կայսրին՝ հարցրել է թէ լինչ կներվէ ինձ կարդալու հայոց զարդների մասին, և կայսրը նրան պատասխանել է թէ, «անհոգ և դէք, և ս ի մ հ ր ամ ան ն և ր ս կ ար գ ար ու թ ի ւ ն ն և ր ս ի ն չ պ է ս տ վ ե ի

ե մ մ ի ն չ և հ ի մ ա, ն ո յ ն պ է ս կ չ ա ր ու ն ա կ ե մ ա ն ե լ »: Այդպիսի լեզու սուսաց կայսրներից առաջին անգամն է լուսւմ հայը Մակար ազգամիտ սրով... Դա՛նն դատ:

Այսպէս, շատ ազնուկ եղաւ վերջին ամիսներում հայոց կեանքում, բայց մենք այդուհանդերձ, բայց թողնելով ամենայարևար ստիթներ, դեռ ցոյց չտվինք նոյն կենդանութեան, ցոյց չտվինք հոգեկան ոյժ ու կամք և դեռ չենք գազարել մնալ մեղ խեղդող գարշաճոտ ճաշճի մէջ...

«Կրկայր, մեր կեանք մի ճաշիճ է ահազին, Մենք էլ ժողված խեղճ գորտեր ենք նրա միջին, Որ չգիտնալով ճանճութիւնից ի՞նչ անել, Երբեմն ըսկսում ենք դուր ազմուկ մենք հանել»:

ՊՍՏԱՍԻՆՆ

Մ . և Ժ . քաղաքներ՝ Մ . ին և Շ . ին . — Սիրով պատրաստ ենք կատարել ձեր առաջարկութիւնը՝ առանձին բրօշխրով հրատարակել «Հնչակի» 6 և 7 համարների «Մատենագրութեան» բաժնում զետեղված, «Իսկ երբ կգայ գործի օրը» վերնագրի տակ Բաֆֆիի մասին քննադատական յօդուածը. և շնորհակալութեամբ ստացվեցաւ այդ նպատակով ձեր ուղարկած 5 և 12 Փրանկ դումարները: Յակայն ցաւում ենք, որ անկարող ենք այն յօդուածն առանձին բրօշխրով հրատարակելու՝ դրա համար հարկաւոր գրամական ծախսերի սղութեան պատճառով: Եթէ ձեր միտքն արձագանք գտնէ և ուրիշների մէջ և գրանց սջակցութիւնն էլ ունենանք, այն ժամանակ նրապետներ իրազարծել ձեր առաջարկութիւնը:

Շ ն ո ր հ ա կ ա լ ու թ ե ա մ ր ս տ ա ց վ ե ց ա ն հ ե տ ե տ ա յ զ ու մ ար ն ե ր ր ք . ք ա ղ ա ք ի ց Ա . ի մ ի ջ ո ց ո վ 50 Փրանկ, որոնցից 30 Փր . 9 . ի ց , 7 Փր . Մ . . . է ք . ի մ է կ ո ս ս ո ճ ո ղ ի ց , 3 Փր . Մ . . . Լ ք . ի մ է կ ո ս ս ո ճ ո ղ ի ց և 10 Փր . Մ . . . է ք . ի ց Մ . ի ց . — Տ . . . ս ք . ի ց Օ . Վ . ի ց 22 ր ու ը ի . — Ժ . ք . ի ց Շ . ի ց 27 Փր . . ն ո յ ն Շ . ի մ ի ջ ո ց ո վ 5 Փր . Մ . . . ս ք . ի ց և Երկու ութսուն կօպէկանոց նամակադրօմներ Գ . ք . ի ց X . ի ց . — Բ . ք . ի ց Լ . ի ց 17 ր . 50 կօպ . — Պ . . . ս ք . ի ց Թ . ի ց 20 Փր .

— Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետևեալ հասցեով: Montpellier. (France). — M. Beniard. Poste restante (No25). Իսկ դրամ ուղարկել: Bale. (Suisse). — M. Daniel. Poste restante.

Իճնդօն . Հայկական ազատ տպարան .